ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2020 թվականի N 1599 - Լ

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել՝

1) զբաղվածության կարգավորման 2021 թվականի պետական ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) զբաղվածության կարգավորման 2021 թվականի պետական ծրագրով նախատեսվող և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացվող միջոցառումների ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) զբաղվածության կարգավորման 2021 թվականի պետական ծրագրերը՝ ըստ Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Սահմանված կարգով զբաղվածության կարգավորման 2021 թվականի պետական ծրագիրը և միջոցառումների ցանկը Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի նախագծի կազմում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

voroshumTK320

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2020 թվականի
սեպտեմբերի 29-ի N 1599 - Լ որոշման

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

1. Զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի (այսուհետ՝ ամենամյա ծրագիր) մշակման և իրականացման ուղենիշային համարվող օրենսդրական հիմքը «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն է (այսուհետ՝ օրենք):

2. Ամենամյա ծրագրի մշակման ընթացքում հաշվի են առնվել՝

1) Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը (այսուհետ՝ հեռանկարային զարգացման ծրագիր), որի հիմքում դրված չորս գերակայություններից, որպես առաջին, մատնանշվում է զբաղվածության ընդլայնումը,

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2023 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված նպատակներն ու գերակայություն-ները,

3) ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված նպատակները, մասնավորապես, «Նպատակ 8. Արժանապատիվ աշխատանք և տնտեսական աճ» նպատակը, այն է՝ խթանել կայացած, ներառական և կայուն տնտեսական աճ, լիարժեք և արտադրողական զբաղվածություն և արժանապատիվ աշխատանք բոլորի համար, ինչպես նաև 1-4-րդ նպատակները (Նպատակ 1. Ոչ աղքատությանը - Ամենուրեք վերացնել աղքատությունը՝ իր բոլոր դրսևորումներով ու ձևերով, Նպատակ 2. Ոչ սովին - Վերացնել սովը, հասնել պարենային ապահովության և բարելավված սնուցման, խթանել գյուղատնտեսության կայուն զարգացումը, Նպատակ 3. Առողջություն և բարեկեցություն - Ապահովել առողջ կյանք և խթանել բարեկեցություն բոլորի համար՝ անկախ տարիքից, Նպատակ 4. Որակյալ կրթություն - Ապահովել ներառական ու համապատասխան որակյալ կրթություն բոլորի համար և խթանել ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորություններ),

4) 2020 թվականին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից իրականացված «Հայաստանի Հանրապետության աշխատաշուկայի վերլուծություն և զբաղվածության պետական կարգավորման ծրագրային լուծումներ» թեմայով հետազոտության արդյունքները:

3. Զբաղվածության պետական քաղաքականությունը մշակում է ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման համակարգի մարմինը և իրականացնում ամենամյա ծրագրի միջոցով՝ համագործակցելով պետական կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման մարմինների, սոցիալական գործընկերների, գործատուների, շահագրգիռ այլ կազմակերպությունների և ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձանց հետ:

4. Ամենամյա ծրագրի նպատակը բնակչության կայուն և արդյունավետ զբաղ-վածության ապահովման համար պայմանների ստեղծումն է: Այն ուղղված է աշխատա-շուկայի լարվածությունը մեղմելուն, զբաղվածության ակտիվ ծրագրերի միջոցով

աշխատաշուկայում անմրցունակ անձանց, ըստ առաջնահերթությունների, կայուն զբաղվածության ապահովմանը և ինքնազբաղվածության խթանմանը, աշխատանք փնտրողների, հատկապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց, երիտասարդների զբաղվածության մակարդակի բարձրացմանը, կայուն զբաղվածություն ապահովող պետական ծրագրերին գործատուների շահագրգիռ ներգրավվածությունը խթանելուն, գործատուների կողմից ներկայացված թափուր աշխատատեղերը որակյալ մասնագետներով համալրելուն, ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման շրջանակներում աշխատաշուկայում անմրցունակ խմբերի արդյունավետ և կայուն զբաղվածության ապահովմանը:

5. Տեղեկատվության հավաքագրման աղբյուրներ են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2014-2020 թվականների վիճակագրական հրապարակումները, Զբաղվածության պետական գրասենյակի (ԶՊԳ) գործունեության հաշվետվությունները, ինչպես նաև կատարված փորձագիտական հարցումների տվյալները:

6. Հաշվի առնելով 2020 թվականի մարտից COVID-19 համավարակի արդեն իսկ արձանագրվող մակրոտնտեսական միջավայրի վրա բացասական ազդեցությունները, նախ արձանագրենք, որ 2020 թվականի առաջին եռամսյակում մակրոտնտեսական ցուցանիշները դեռ ունեցել են աճի միտումներ. այսպես՝ ՀՆԱ-ն կազմել է 1,268,440.2 մլն դրամ, որը 2019 թվականի նույն ժամանակահատվածի ՀՆԱ-ից մեծ է 3.9%-ով: 2020 թվականի երկրորդ եռամսյակում ՀՆԱ-ն կազմել է 1,270,978 մլն դրամ, որի պարագայում գրանցվել է 13.7% տնտեսական անկում 2019 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ: Հատկանշական է, որ 2020 թվականի հուլիսի 27-ին ՀՀ կենտրոնական բանկը հայտարարել է, որ 2020 թվականին կանխատեսվում է ՀՆԱ-ի 4% անկում, իսկ 2021 թվականին՝ 5.5% աճ: 2020 թվականի անկման մեջ ամենաբարձր ցուցանիշը կանխատեսվում է շինարարության ոլորտում՝ -11,2%:

Գծանկար 1. ՀՆԱ-ի դինամիկայի ջրվեժային պատկերը, մլն դրամ



7. Դիտարկելով մակրոտնտեսական զարգացումները միջնաժամկետում՝ ամրագրենք, որ Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ի դինամիկայում վերջին տարիներին արձանագրվել են դրական, բայց նկատելի անհավասարաչափ աճի տեմպեր: Գծանկարում դիտարկվող տարիների ընթացքում ՀՆԱ-ի ծավալի հավելաճի տեմպը միջինում կազմել է 104.5% (Գծանկար 2): Հաշվի առնելով, որ համավարակի մակրոտնտեսական ազդեցությունները իրենց բնույթով լավատեսական իմաստով տարբերվում են ֆինանսատնտեսական ու արտաքին գործոններ պարունակող ճգնաժամերից՝ պետք է

արձանագրել, որ Հայաստանի Հանրապետությունում 2020-2021 թվականներին տնտեսության վերականգնումը սպասվում է էապես արագ տեմպերով:

Գծանկար 2. ՀՆԱ-ի իրական աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ, %



8. 2015-2019 թվականներին Հայաստանի Հանրապետության տնտեսության կառուցվածքում կայուն և շոշափելի աճել են ծառայությունների և արդյունաբերության ոլորտները: Շինարարության ու գյուղատնտեսության ոլորտներում նկատելի են որոշակի անկումներ (Գծանկար 3):

Գծանկար 3. ՀՆԱ-ի կառուցվածքն՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների, % ՀՆԱ-ում



9. Հայաստանի Հանրապետությունում ՀՆԱ-ի և գործազուրկների թվի կորելացիան բացասական է և կազմում է շուրջ -0.74: ՀՆԱ-ի և գործազրկության մակարդակի կորելացիան նույնպես բացասական է և կազմում է -0.61 (Գծանկար 4): Այս արդյունքներն օրինաչափ են և արձանագրում են, որ տնտեսական աճին արձագանքում են աշխատատեղերի ստեղծման միտումները: ՀՆԱ-ի և գործազրկության կապի մոդելավորման համար կիրառվել է «ARIMAX» մոդելը, որի վերլուծության արդյունքները վկայում են, որ Հայաստանի Հանրապետությունում 1%-ով ՀՆԱ-ի աճը ենթադրում է 0.26%-ով գործազուրկների կրճատում:

Գծանկար 4. ՀՆԱ-ի ու գործազուրկների թվի և ՀՆԱ-ի ու գործազրկության մակարդակի կորելացիոն ամպեր





10. Գծանկար 5-ում ներկայացված է Հայաստանի Հանրապետությունում աշխատանքի արտադրողականության և գործազուրկների թվաքանակի կորելացիոն ամպը: Կորելացիան շուրջ -0,75 է, ինչը բացատրվում է այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետությունում աշխատանքի արտադրողականության աճը էապես ենթադրում է աշխատանքի արդյունքի բարձրացման հետևանքով՝ աշխատանքի շուկայում մրցակցության աճ, աշխատանքային ռեսուրսների կարողությունների բարձրացում և վերջիններիս արդյունքում՝ գործազրկության նվազում:

Գծանկար 5. ՀՆԱ-ի և աշխատանքի արտադրողականության կորելացիոն ամպը



11. Գծանկար 6-ը վկայում է, որ վերջին հինգ տարիներին զբաղվածների թվաքանակի փոփոխության միտումը բացասական է՝ տարեկան միջին նվազումը 1.2%: Գծանկար 3-ում ներկայացված է 2014-2019 թվականներին ՀՀ մշտական բնակչության թվաքանակի, աշխատանքային ռեսուրսների և աշխատուժի թվաքանակի դինամիկան: Ինչպես երևում է գծապատկերից, ՀՀ բնակչության թվաքանակը տարեցտարի նվազել է տարեկան միջինը 0.34%-ով, զուգահեռաբար նվազել են նաև աշխատանքային ռեսուրսների և աշխատուժի թվաքանակները՝ համապատասխանաբար 1.47%-ով և 1.68%-ով:

Գծանկար 6. ՀՀ մշտական բնակչության, աշխատանքային ռեսուրսների և աշխատուժի թվաքանակները



12. Ընդ որում, պետական հատվածում զբաղվածների թվաքանակը 2014 թվականից 2019 թվականներին տարեկան ավելացել է միջինը 1.2%-ով (Գծանկար 7): 2019 թվականի տվյալներով՝ պետական հատվածին ընդհանուր զբաղվածների մեջ բաժին է

ընկնում զբաղվածների մոտ 24.2%-ը: Հատկանշական է, որ 2019 թվականին արձանագրվել է զբաղվածների էական աճ՝ 4.3%-ի չափով:

Գծանկար 7. Զբաղվածների դինամիկան՝ ըստ պետական և ոչ պետական հատվածների



13. Զբաղվածների բաշխումը՝ ըստ սեռի, ներկայացված է գծանկար 8-ում: Տղամարդկանց տեսակարար կշիռը ընդհանուր զբաղվածների մեջ տարեկան միջինում կազմում է 53%: 2018 թվականին, 2017 թվականի համեմատությամբ, զբաղված տղամարդկանց թիվը ավելացել է 4.5%-ով, իսկ կանանց թիվը նվազել է 4.02%-ով:

Գծանկար 8. Զբաղվածների դինամիկան՝ ըստ սեռի, հազ. մարդ



14. Զբաղվածների դինամիկան ըստ տարիքային խմբերի (Գծանկար 9) ցույց է տալիս, որ 15-ից 29 տարեկանների շրջանում զբաղվածների թվաքանակը տարեկան միջինում նվազել է 4.1%-ով, 30-ից 40 տարեկանների շրջանում նվազել է 1%-ով, իսկ 50 և բարձր տարիքի զբաղվածների շրջանում նույնպես նվազել է 3.5%-ով: 2018 թվականին, 2014 թվականի համեմատությամբ, զբաղվածների տեսակարար կշիռը ընդհանուր

զբաղվածների մեջ ըստ տարիքային խմբերի փոփոխվել է հետևյալ կերպ՝ 15-ից 29 տարեկան զբաղվածները 2014 թվականին կազմել են ընդհանուր զբաղվածների 21%-ը, իսկ 2018 թվականին՝ 19%-ը, 30-ից 49 տարեկանների շրջանում 2014 թվականին՝ 41%-ը, իսկ 2018 թվականին՝ 44%-ը, 50 և բարձր տարիքի մարդկանց շրջանում 2014 թվականին՝ 38%-ը, իսկ 2018 թվականին՝ 37%-ը:

Գծանկար 9. Զբաղվածների թվաքանակը՝ ըստ տարիքային խմբերի, հազ. մարդ



15. Զբաղվածների դինամիկան ըստ կրթական մակարդակի (Գծանկար 10) վկայում է, որ դիտարկվող ժամանակաշրջանում բարձրագույն հետբուհական կրթական մակարդակ ունեցող զբաղվածների թվաքանակը նվազել է տարեկան միջինում 0.9%-ով, միջին մասնագիտական կրթական մակարդակ ունեցող զբաղվածների շրջանում՝ 3.2%-ով, նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթությամբ մասնագետների շրջանում աճել է 3.7%-ով, առանց մասնագիտական կրթության զբաղվածների թվաքանակը նույնպես նվազել է՝ տարեկան միջինում կազմելով 3.6:

Գծանկար 10. Զբաղվածների թվաքանակը՝ ըստ կրթական մակարդակի, հազ. մարդ



16. Զբաղվածների թվաքանակի փոփոխությունը 2018 թվականին՝ 2014 թվականի համեմատությամբ և զբաղվածների տեսակարար կշիռը՝ ըստ Երևանի և մարզերի

(Գծանկար 11) ցույց է տալիս, որ 2018 թվականին՝ 2014 թվականի համեմատությամբ, զբաղվածների թվաքանակի աճ է արձանագրվել Արարատի մարզում՝ 7.5%-ով, Արմավիրում 9.2%-ով և Սյունիքի մարզում 15.9%-ով: Կտրուկ անկում է եղել Վայոց ձորի մարզում՝ 40.4%, Տավուշում՝ 36.8%, Արագածոտնում՝ 31.4% և Լոռիում՝ 31.1%:

17. Ըստ զբաղվածների տեսակարար կշռի՝ ՀՀ-ում զբաղվածների 30%-ը բաժին է ընկնում Երևան քաղաքին, այնուհետև բարձր է ցուցանիշը Արմավիրի մարզում՝ 12%, Արարատի մարզում՝ 11%, Կոտայում՝ 9%, Լոռիում և Շիրակում՝ 8-ական %:

Գծանկար 11. Զբաղվածների թվաքանակի փոփոխությունը 2018 թվականին՝ 2014 թվականի համեմատությամբ և զբաղվածների տեսակարար կշիռը՝ ըստ Երևանի և ՀՀ մարզերի, 2018 թ.



18. Գծանկար 12-ում ներկայացված է գործազուրկների թվաքանակի փոփոխությունը 2014-2019 թվականների ընթացքում: Գործազուրկների թիվը դիտարկվող ժամանակաշրջանում տարեկան միջինում նվազել է 3.3%-ով, ընդ որում, 2014-2018 թվականների ընթացքում տղամարդկանց շրջանում գործազրկությունը ավելացել է տարեկան միջինում 1.1%-ով, իսկ կանանց շրջանում նվազել է տարեկան միջինը 6%-ով:

Գծանկար 12. Գործազուրկների թվաքանակի փոփոխությունը 2014-2019 թվականներին՝ ըստ սեռի, հազ. մարդ



19. Գործազրկության դասակարգումը՝ ըստ տարիքային խմբերի, ներկայացված է գծանկար 13-ում: Ըստ 2018 թվականի տվյալների՝ 15-ից 29 տարեկան գործազուրկները

ընդհանուր գործազուրկների մեջ ունեն մոտ 33% մասնաբաժին, 30-ից 49 տարեկանները և 50 ու բարձր տարիքի գործազուրկները համապատասխանաբար՝ 42% և 26% մասնաբաժին, ընդ որում, գործազուրների թիվը 15-ից 29 տարեկանների շրջանում դիտարկվող ժամանակաշրջանում տարեկան միջին չափով նվազել է 7.5%-ով, 30-ից 50 տարեկանների շրջանում տարեկան միջինը աճել է 0.8%-ով, իսկ 50 և բարձր տարիքի շրջանում աճել է միջինում 0.2%-ով:

Գծանկար 13. Գործազուրկների թվաքանակը՝ ըստ տարիքի, հազ. մարդ



20. Ըստ կրթական մակարդակի գործազուրկների թվաքանակի (Գծանկար 14) միտումներում բարձրագույն հետբուհական կրթական մակարդակ ունեցող գործազուրկների թիվը դիտարկվող ժամանակաշրջանում տարեկան նվազել է միջինում 6.3%-ով, միջին մասնագիտական կրթություն ունեցող գործազուրկների թիվը տարեկան միջինում աճել է 1.6%-ով, նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթությամբ գործազուրկների թվաքանակը միջինում տարեկան աճել է 4.6%-ով, իսկ առանց մասնագիտական կրթության գործազուրկների թիվը տարեկան միջինը նվազել է 2%-ով:

Գծանկար 14. Գործազուրկների թվաքականը՝ ըստ կրթական մակարդակի, հազ. մարդ



21. Աշխատուժի մասնակցության, զբաղվածության և գործազրկության մակարդակների միտումներից (Գծանկար 15) երևում է, որ աշխատուժի մասնակցության մակարդակը 2014-2019 թվականների ընթացքում նվազել է 0.7%-ով, զբաղվածության մակարդակը ավելացել է 0.2%-ով, իսկ գործազրկության մակարդակը նվազել է 1.7%-ով:

Գծանկար 15. Աշխատուժի մասնակցության, զբաղվածության և գործազրկության մակարդակները, %



22. Կիրառելով գլխավոր կոմպոնենտների եղանակը՝ կառուցվել է ժողովրդագրական ինդեքս, որի նպատակն է գնահատել զբաղվածության մակարդակի վրա ժողովրդագրական գործոնների ազդեցությունը: Այսպիսով՝ վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ բնակչության թվաքանակը պայմանավորում է զբաղվածության վարիացիայի 10.29%-ը, կին/տղամարդ հարաբերակցությունը՝ 3.09%-ը, ընդ որում՝ բացասական ազդեցություն ունի, այսինքն՝ բնակչության թվաքանակում կանանց տեսակարար կշռի աճը բերում է զբաղվածության կրճատման: Գյուղ/քաղաք հարաբերակցությունը՝ 14.53% դրական ազդեցությամբ, այսինքն՝ գյուղական բնակչության տեսակարար կշռի աճը բերում է զբաղվածության աճի: Ժողովրդագրական ծանրաբեռնվածությունը 12.07% է, այսինքն՝ աճը բերում է զբաղվածության կրճատման: Միգրացիայի հավելաճի տեմպի 1 տոկոսով աճը բերում է 2.66%-ով զբաղվածության կրճատման: Կատարված վերլուծությունը փաստում է, որ ՀՀ-ի համար էական խնդիր է գյուղական բնակչության աճի և կյանքի որակի խթանման թիրախավորումը, քանի որ այն ուղղակիորեն կբարելավի ՀՀ զբաղվածության մակարդակը, հետևաբար կտանի ընդհանուր բարեկեցության մակարդակի աճի:

23. Զբաղվածության վրա COVID 19-ի ազդեցությունը գնահատելու համար նախ հաշվարկվել են 2020 թվականի համար կանխատեսումային արժեքները նորմալ պայմաններում, այսինքն՝ երբ հետազոտվող երևույթը պահպանում է իր միտումը: Այնուհետև «ARIMA» մոդելի հիման վրա կանխատեսված արժեքները համեմատելով առկա/արդեն հասանելի 2020 թվականի փաստացի արժեքների հետ՝ ստացվել է COVID 19-ի էֆեկտը համեմատվող ժամանակահատվածի համար: Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ COVID 19-ի ազդեցությամբ ՀՀ զբաղվածների թվաքանակը միջինում 20%-ով կրճատումն է:

Գծանկար 16. 2020 թվականին COVID-19 ազդեցության կանխատեսում



24. Փորձագիտական հարցումներին մասնակցած 19 փորձագետների գնահատականների ելակետային վերլուծությունը ցույց է տալիս, որ մաքսիմալ հավանական սցենարի համաձայն՝ մոտակա 1 տարվա ընթացքում գյուղատնտեսության, պետական կառավարման, շինարարության, մանրամեծածախ առևտրի, փոխադրում/պահեստավորման և կրթության ոլորտներում աշխատուժի պահանջարկը չի փոխվի, ՏՏ և կապի, առողջապահության ոլորտներում կաճի մինչև 5%, կացության/հանրային սննդի ոլորտում կտրուկ կնվազի, իսկ ադյունաբերության, մշակույթի և մնացած այլ ոլորտներում կլինի անկում մինչև 5%-ով: Միաժամանակ, մոտակա 1 տարվա ընթացքում աշխատուժի առաջարկը շինարարության ոլորտում կաճի մինչև 5%, կացության/հանրային սննդի ոլորտում կնվազի, իսկ գյուղատնտեսության, պետական կառավարման, արդյունաբերության, շինարարության, մանրամեծածախ առևտրի, փոխադրում/պահեստավորման, ՏՏ և կապի, առողջապահության, մշակույթի, կրթության և մնացած այլ ոլորտներում չի փոխվի:

25. Փորձագիտական գնահատականների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ համաձայն մաքսիմալ հավանական սցենարի՝ մոտակա 3 տարվա ընթացքում աշխատուժի պահանջարկը գյուղատնտեսության, փոխադրում/պահեստավորման ոլորտներում կաճի մինչև 5%, իսկ շինարարության, կացության/հանրային սննդի, պետական կառավարման, արդյունաբերության, շինարարության, մանրամեծածախ առևտրի, ֆինանսական և ապահովագրական, ՏՏ և կապի, առողջապահության, մշակույթի, կրթության և մնացած այլ ոլորտներում չի փոխվի: Միաժամանակ, մոտակա 3 տարվա ընթացքում աշխատուժի առաջարկը գյուղատնտեսության, արդյունաբերության, շինարարության, կացության/հանրային սննդի, մշակույթի ոլորտներում կաճի մինչև 5%, իսկ պետական կառավարման, մանրամեծածախ առևտրի, ֆինանսական և ապահովագրական, ՏՏ և կապի, առողջապահության, փոխադրում/պահեստավորման ոլորտում, կրթության և մնացած այլ ոլորտներում չի փոխվի:

26. Հարցումների արդյունքները ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ առաջիկա 3 տարվա ընթացքում ՀՀ աշխատաշուկայի պահանջարկի ու առաջարկի սպասվող քանակական փոփոխությունները՝ ըստ տնտեսության առանձին ոլորտների, կդրսևորվի այսպես. գյուղատնտեսության, անտառտնտեսության և ձկնորսության, արդյունաբերության, մեծածախ և մանրածախ առևտրի, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգման, կրթության, պետական կառավարման և պաշտպանության, պարտադիր սոցիալական ապահովության, առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկման, ֆինանսական և ապահովագրական գործունեության, կացության և հանրային սննդի կազմակերպման, տեղեկատվության և կապի, այլ ծառայությունների ոլորտներում աշխատաշուկայի առաջարկը և պահանջարկը կլինի

համեմատաբար կայուն՝ դրսևորելով աճի միտում: Փոխադրումների և պահեստային տնտեսության ոլորտում տեղի կունենա աշխատաշուկայի առաջարկի և պահանջարկի կտրուկ աճ այն դեպքում, երբ մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտներում աշխատաշուկայի պահանջարկը և առաջարկը կտրուկ կնվազի:

27. Փորձագիտական գնահատականները ցույց են տալիս, որ որ 2021 թվականի ընթացքում նոր ստեղծվող աշխատատեղերի գծով որակավորված ու կարողություններ ունեցող աշխատողների պահանջի միտումները գյուղատնտեսության, անտառտնտեսության և ձկնորսության, ֆինանսական և ապահովագրական գործունեության, կրթության, առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկման ոլորտներում առաջնային կարևորվել են, որակավորված կադրերի շոշափելի պահանջարկը, նկատելի պահանջարկի դերը կարևորվել է շինարարության, մեծածախ և մանրածախ առևտրի, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգման, կացության և հանրային սննդի կազմակերպման, մշակույթի, զվարճությունների և հանգստի, փոխադրումների և պահեստային տնտեսության, այլ ծառայությունների ոլորտներում: Տեղեկատվության և կապի ոլորտում նոր ստեղծվող աշխատատեղերում որակավորված ու կարողություններ ունեցող աշխատողների պահանջի միտումը կլինի ինտենսիվ պահանջարկը, պետական կառավարման և պաշտպանության, պարտադիր սոցիալական ապահովության ոլորտում՝ և՛ շոշափելի, և՛ նկատելի պահանջարկը: Առաջադրվող պահանջների և կարողությունների շարքում գրեթե բոլոր ոլորտներում փորձագետները առաջնային նշանակություն են տվել ոլորտի խորը մասնագիտացմանը, տեղեկատվության և կապի ոլորտում՝ ՏՏ գիտելիքներին, Աշխատաշուկայի պահանջարկը ձևավորող որակական նոր պահանջների շարքում հարցվողները մատնանշել են լեզուների իմացությունը և փափուկ կարողությունները (soft skills՝ պատասխանատվություն, կարգապահություն, հարմարվելու արագություն, հաղորդակցություն, թիմային աշխատանք, ժամանակի կառավարում, ղեկավարում, խնդիրների լուծում և այլն):

28. Դեկտեմբեր ամսվա վերջի դրությամբ ԶՊԳ-ի հետ տարվա սկզբից համագործակցող գործատուների թիվը բավականին դրական դինամիկա է ունեցել 2015-2017 թվականներին՝ գրանցելով տարեկան մոտ 14.6%-ով աճ: 2018 թվականին՝ նախորդ տարվա համեմատ, ունեցել ենք համագործակցող գործատուների թվի կրճատում 105-ով՝ կազմելով 18628, իսկ արդեն 2019 թվականին՝ աճ 1825-ով կամ 7.8%-ով՝ կազմելով 20453 (Գծանկար 17):

Գծանկար 17. Դեկտեմբեր ամսվա վերջի դրությամբ՝ տարեսկզբից ԶՊԳ-ի հետ համագործակցող գործատուների թիվը



29. Թափուր աշխատատեղերի վերաբերյալ հայտ ներկայացրած գործատուների և հավաքագրվող չկրկնվող թափուր աշխատատեղերի թիվը դեկտեմբեր ամսվա վերջի դրությամբ տարեսկզբից 2015-2019 թվականներին շարունակաբար աճել է՝ տարեկան միջինում 18.9%-ով: Ընդ որում, 2019 թվականին՝ նախորդ տարվա համեմատ, աճելով շուրջ 47.0%-ով՝ կազմել է 14366 հայտ: 2019 թվականին՝ նախորդ տարվա համեմատ, աճել է նաև հավաքագրվող չկրկնվող թափուր աշխատատեղերի ամսական միջին թիվը տարեսկզբից շուրջ 35.1%-ով՝ կազմելով 3718, ի տարբերություն նախորդ չորս տարիների միջին ցուցանիշի, որը կազմել է 2938 (Գծանակար 18):

Գծանկար 18. Թափուր աշխատատեղերի վերաբերյալ հայտ ներկայացրած գործատուների և հավաքագրվող չկրկնվող թափուր աշխատատեղերի թիվը դեկտեմբեր ամսվա վերջի դրությամբ տարեսկզբից



30. 2019 թվականի հուլիսի 1-ի դրությամբ զբաղվածության կարգավորման պետական ծրագրերում տարեսկզբից ընդգրկվել է 1936 աշխատանք փնտրող անձ, 2020 թվականի հուլիսի 1-ի դրությամբ՝ 2914, որը ավել է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ 50.5 %-ով: Ըստ ԶՊԳ-ի տվյալների՝ 2020 թվականի օգոստոսի մեկի դրությամբ՝

1) գործազուրկների թվաքանակը կազմել է 60028 մարդ.

2) գործազուրկների 3.9%-ը հաշմանդամություն ունեցող անձինք են.

3) տարեսկզբից աշխատանքի են տեղավորվել գործակալությունում հաշվառված՝

ա. աշխատանք փնտրողների 6.6%-ը կամ 5848 մարդ,

բ. առաջին անգամ աշխատանք փնտրողների 7.9%-ը կամ 2035 մարդ.

4) ԶՊԳ-ն տարեսկզբից համագործակցել է 20720 գործատուների հետ, որոնցից թափուր աշխատատեղերի հայտ է ներկայացրել 1429 գործատու, հավաքագրված չկրկնվող թափուր աշխատատեղերի թիվը կազմել է 4029, որից նոր ստեղծված աշխատատեղերի թիվը եղել է 54:

31. Հաշվի առնելով զբաղվածության իրավիճակային վերլուծության ամփոփ արդյունքները՝ 2021 թվականի համար առանձնացվում են հետևյալ հիմնախնդիրները.

1) Հայաստանի Հանրապետության աշխատաշուկայում առաջարկի և պահանջարկի քրոնիկ անհամապատասխանությունը, գործազրկության բարձր մակարդակը,

2) աշխատաշուկայի տարածքային անհամամասնություններով պայմանավորված առանձին տարածաշրջաններում գործազրկության մակարդակների էական տարբերությունների առկայությունը,

3) աշխատաշուկայում անմրցունակ անձանց զբաղվածության ապահովման դժվարությունները,

4) առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող երիտասարդների, կանանց աշխատանքի տեղավորման հնարավորությունների ցածր մակարդակը,

5) աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվության թափանցիկությունը և հասանելիությունը:

Վերը նշված հիմնախնդիրներով է պայմանավորված հայաստանյան աշխատաշուկայի կարևոր առանձնահատկությունը՝ աշխատանքային միգրացիայի բարձր ցուցանիշները:

32. Հաշվի առնելով վերը նշված հիմնախնդիրները, մասնավորապես այն, որ հանրապետությունում տարիներ շարունակ պահպանվում է գործազրկության բարձր մակարդակ, այն մեղմելու նպատակով պետական բյուջեի միջոցների հաշվին ամենամյա ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին մինչև վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում

ա. ծրագրի նպատակն ունկնդրին աջակցելն է աշխատաշուկայի պահանջներին համապատասխան նոր կարողություններ ու հմտություններ ձեռք բերելու միջոցով հարմար աշխատանքի տեղավորման, աշխատանքից ազատման ռիսկի նվազեցման, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հարցերում,

բ. ծրագրի շահառուները գործազուրկներն են, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին մինչև վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձինք,

գ. մասնագիտական ուսուցման դասընթացներում ընդգրկված գործազուրկին ուսուցման ամբողջ ընթացքում յուրաքանչյուր ամիս վճարվում է կրթաթոշակ,

դ. ակնկալվում է, որ ծրագրում ընդգրկվողների առնվազն 10%-ը պետք է լինեն հաշմանդամություն ունեցող անձինք:

2) Աշխատաշուկայում անմրցունակ ազատազրկման վայրերից վերադարձած, հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև «հաշմանդամություն ունեցող երեխա» կարգավիճակ ունեցող անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնություն

ա. ծրագրի նպատակն է գործատուի կողմից անմրցունակ անձանց տրվող աշխատավարձի մասնակի փոխհատուցման միջոցով աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորվելուն նպաստելը և այդ ճանապարհով կայուն զբաղվածության ապահովումը,

բ. ծրագրի շահառուները հաշմանդամություն ունեցող, ազատազրկման վայրերից վերադարձած, ինչպես նաև «հաշմանդամություն ունեցող երեխա» կարգավիճակ ունեցող աշխատաշուկայում անմրցունակ անձինք են,

գ. հարմար աշխատանքի տեղավորված յուրաքանչյուր անմրցունակ անձի համար մեկ տարի ժամկետով, ամսական կտրվածքով, գործատուին տրվում է փոխհատուցում՝ տվյալ անմրցունակ անձի համար սահմանված ամսական աշխատավարձի 50 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափը, իսկ ուղեկցողի կարիք ունեցող անձանց ուղեկցող ունենալու համար տրվում է դրամական օգնություն ծրագրի իրականացման ամբողջ ժամանակահատվածում, ամսական կտրվածքով՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսի չափով:

3) Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում

ա. ծրագրի նպատակը ձեռք բերած մասնագիտությամբ առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող գործազուրկի՝ իր մասնագիտական որակավորմանը համապատասխան մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու, աշխատաշուկայում առավել մրցունակ դառնալու և հարմար աշխատանքի տեղավորվելու համար ցուցաբերվող աջակցության միջոցով կայուն զբաղվածության ապահովումն է,

բ. ծրագրի շահառուները գործազուրկներն են, որոնք ունեն մասնագիտական կրթություն և որակավորում,

գ. ծրագրի իրականացման ամբողջ ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից գործազուրկին վճարվում է աշխատավարձ՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված գումարի չափով, գործատուին տրամադրվում է գումար՝ գործազուրկի աշխատավարձից հաշվարկվող եկամտային հարկը, դրոշմանիշային վճարը, օրենքով սահմանված դեպքերում՝ նպատակային սոցիալական վճարը փոխհատուցելու համար, ինչպես նաև գումար աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում աշխատողի հետ վերջնահաշվարկ կատարելու համար, իսկ գործատուի մոտ աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացը կազմակերպող մասնագետին ամսական կտրվածքով վճարվում է գումար՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսի չափով:

դ. ծրագրի տևողությունը 3 ամիս է,

ե. ակնկալվում է, որ ծրագրում ընդգրկվածների առնվազն 10%-ը պետք է լինեն հաշմանդամություն ունեցող անձինք:

4) Աշխատանքի փոնավաճառի կազմակերպում

ա. ծրագրի նպատակը գործատուի և աշխատանք փնտրողի անմիջական հաղորդակցման միջոցով, մի կողմից՝ աշխատանք փնտրողի կայուն զբաղվածության ապահովումն է, իսկ մյուս կողմից՝ գործատուի մոտ առկա թափուր աշխատատեղերի արդյունավետ համալրումը,

բ. ծրագրի շահառուներն են աշխատանք փնտրողները և գործատուները,

գ. ծրագիրը մեկօրյա միջոցառում է, որն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ընտրված ծառայություններ մատուցող կազմակերպության միջոցով:

5) Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում

ա. ծրագրի նպատակը աշխատուժի ներքին տեղաշարժի կարգավորման միջոցով Հայաստանի Հանրապետության մարզերում, մասնավորապես, գյուղական բնակավայրերում և սահմանամերձ տարածաշրջաններում շարունակաբար չլրացվող թափուր աշխատատեղերի և, հատկապես, բժիշկների և ուսուցիչների թափուր աշխատատեղերի համալրումն ու կայուն զբաղվածության ապահովումն է,

բ. ծրագրի շահառուներն են գործազուրկները,

գ. ծրագրի շրջանակներում շահառուներին փոխհատուցվում են հետևյալ ծախսերը՝

- շահառուի և իր ընտանիքի անդամների տեղափոխման տրանսպորտային ծախսը,
- շահառուի և իր ընտանիքի անդամների անհրաժեշտ գույքի տեղափոխման տրանսպորտային ծախսը,
- 4 անգամ մշտական բնակավայր այցելելու համար տրանսպորտային ծախսը,
- միանվագ ֆինանսական աջակցություն՝ նվազագույն ամսական աշխատավարձի եռապատիկի չափով,
- ամսական գումար բնակարանային վարձի և կոմունալ ծախսերի համար՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափով, 2 տարի ժամկետով,
- աշխատավարձի հավելում՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսից մինչև 100 տոկոսի չափով, մեկ տարի ժամկետով, հաշվի առնելով թափուր աշխատատեղերի՝ ըստ մասնագիտությունների լրացման առաջնահերթությունները, ընդ որում, ըստ մասնագիտությունների աշխատավարձի հավելման չափերը հաստատված են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2014 թվականի հուլիսի 3-ի N 82-Ա/1 հրամանով,

դ. ծրագրի տևողությունը 2 տարի է:

6) Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում

Ծրագրում ներառված են հետևյալ 2 ենթածրագրերը՝

1. աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման համար միանվագ փոխհատուցում գործատուին,

2. հաշմանդամություն ունեցող անմրցունակ անձանց աշխատատեղի հարմարեցման համար միանվագ փոխհատուցում գործատուին:

Նշված երկու ենթածրագրերն աշխատաշուկայում անմրցունակ անձանց համար կարող են իրականացվել ինչպես համատեղ, այնպես էլ առանձին՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման N 8 հավելվածի պահանջները,

ա. ծրագրի նպատակն աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների՝ աշխատանքի վայրում ձեռքբերման հնարավորությունների ընձեռման միջոցով կայուն զբաղվածության ապահովումն է, ինչպես նաև աշխատատեղի հարմարեցման աջակցության միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց կայուն զբաղվածության ապահովումը,

բ. ծրագրի շահառուներն աշխատաշուկայում անմրցունակ անձինք են.

գ. 1-ին ենթածրագրի շրջանակներում անմրցունակ անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման համար գործատուին տրամադրվում է միանվագ փոխհատուցում՝ 50.0 հազ. դրամից մինչև 200.0 հազ. դրամի չափով, իսկ 2-րդ ենթածրագրում ընդգրկված յուրաքանչյուր անձի համար գործատուի մոտ աշխատատեղի հարմարեցման նպատակով փոխհատուցվում են աշխատանքի համար անհրաժեշտ հատուկ պարագաների, աշխատատեղի հարմարեցման կազմակերպատեխնիկական ու

էրգոնոմետրիկ հատուկ պահանջների ապահովման համար անհրաժեշտ ծախսերը, որը մեկ անձի համար չպետք է գերազանցի հինգ հարյուր հազար դրամը:

7) Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար աջակցության տրամադրում

ա. ծրագրի նպատակը փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության միջոցով կայուն զբաղվածության ապահովումն ու աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության իրականացման և ինքնազբաղվածության խթանման համար աջակցության տրամադրումն է, ինչպես նաև լրացուցիչ աշխատատեղերի ստեղծումը,

բ. ծրագրի շահառուներն են աշխատաշուկայում անմրցունակ անձինք,

գ. ծրագրի շրջանակներում ակնկալվող ձեռնարկատիրական գործունեության մեկնարկի և իրականացման համար անհրաժեշտ աջակցությունն (խորհրդատվություն, ուսուցում, գործարար ծրագրի մշակում և վերջինիս իրականացման ուղեկցում) իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ընտրված կազմակերպության կողմից: Կազմակերպությունը մեկ տարի անընդմեջ, ըստ անհրաժեշտության, աշխատում է ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար աջակցություն ստացած շահառուի հետ,

դ. ծրագրի շրջանակներում տրամադրվող աջակցության առավելագույն արժեքը 1,350.0 հազար դրամ է, որը ներառում է հետևյալ ծախսերի փոխհատուցումը՝

- ծրագրում որպես վարձու աշխատողներ ներգրավված աշխատանք փնտրող անձանց աշխատավարձի անվանական չափի 25 տոկոսը, բայց ոչ ավելի, քան մեկ վարձու աշխատողի համար «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսը՝ մեկ տարի ժամկետով, ամսական կտրվածքով,
- ծրագրով անմրցունակ անձի կողմից ձեռք բերվող հիմնական միջոցների ընդհանուր արժեքի 75 տոկոսը՝ միանվագ, բայց ոչ ավելի, քան հինգ հարյուր հազար դրամը,
- տարածքի վարձակալության արժեքի 50 տոկոսը, բայց ոչ ավելի, քան ամսական քսանհինգ հազար դրամը՝ մեկ տարի ժամկետով, ամսական կտրվածքով,
- ծրագրով նախատեսված ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձի՝ այդ գործունեությունից առաջացող՝ օրենքով սահմանված եկամտային հարկը, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում՝ նպատակային սոցիալական վճարը, բայց ոչ ավելի, քան «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափը՝ մեկ տարի ժամկետով, ամսական կտրվածքով,

ե. ակնկալվում է, որ ծրագրում ընդգրկվողների առնվազն 26%-ը պետք է լինեն հաշմանդամություն ունեցող անձինք:

8) Աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ (տավարաբուծությամբ, ոչխարաբուծությամբ, խոզաբուծությամբ, այծաբուծությամբ, թռչնաբուծությամբ) զբաղվելու համար աջակցության տրամադրում

ա. ծրագրի նպատակը փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության միջոցով կայուն զբաղվածության ապահովումն ու աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության իրականացման և ինքնազբաղվածության խթանման համար աջակցության տրամադրումն է, ինչպես նաև լրացուցիչ աշխատատեղերի ստեղծումը,

բ. ծրագրի շահառուներն են աշխատաշուկայում անմրցունակ անձինք,

գ. ծրագրի շրջանակներում տրամադրվող աջակցության առավելագույն արժեքը 1,200.0 հազար դրամ է, որը ներառում է հետևյալ ուղղությունները՝

- ծրագրում ընդգրկված անմրցունակ անձին տրվում է գումար ծրագրով նախատեսված անասնապահական աշխատանքների կատարման համար «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսի չափով՝ մեկ տարի ժամկետով, ամսական կտրվածքով՝ ներառյալ եկամտային հարկը և օրենքով սահմանված դեպքերում՝ նպատակային սոցիալական վճարը,
- ծրագրով անմրցունակ անձի կողմից կենդանիների և համապատասխան քանակի ականջապիտակների ձեռքբերման համար միանվագ փոխհատուցում՝ առավելագույնը 350.0 հազ. դրամ, ընդ որում, ձեռք բերվող կենդանիները պետք է բավարարեն հետևյալ պայմաններին՝ առնվազն մեկ հղի երինջ կամ հղի կով կամ առնվազն երկու հղի խոզամայր կամ առնվազն յոթ հղի մաքի կամ առնվազն 150 վեց և ավելի ամսական վառեկ կամ առնվազն 7 այծ կամառնվազն 30 վեց և ավելի ամսական հնդկահավ կամ առնվազն 60 վեց և ավելի ամսական սագ կամ բադ,
- անասնակերի ձեռքբերման համար միանվագ փոխհատուցում՝ առավելագույնը 230.0 հազար դրամ,
- անասնաբույժին յուրաքանչյուր ծրագրի մասով կարգով նախատեսված աշխատանքների իրականացման համար տրվում է գումար «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 20 տոկոսի չափով՝ մեկ տարի ժամկետով, ամսական կտրվածքով՝ ներառյալ եկամտային հարկը և օրենքով սահմանված դեպքերում՝ նպատակային սոցիալական վճարը:

9) Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում

ա. ծրագրի նպատակը սեզոնային զբաղվածության ապահովման միջոցով հանրապետության առավել խոցելի և աղքատ գյուղական բնակավայրերի բնակչության սոցիալական լարվածության մեղմումն ու աշխատանքի արտադրողականության բարձրացումն է, նրանց կայուն զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծումը, իրավիճակից բխող մարտահրավերներին արագ արձագանքող միջոցներով՝ գյուղացիական տնտեսություններին աջակցելը:

բ. ծրագրի շահառուները մինչև 3 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր կամ վարձակալ կամ անհատույց օգտագործող հանդիսացող՝ աշխատաշուկայում անմրցունակ անձինք են, որոնք որպես աշխատանք փնտրող հաշվառվել են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գրասենյակի տարածքային կենտրոնում, ներկայացրել են հողի սեփականատեր կամ վարձակալ, կամ անհատույց օգտագործող հանդիսանալը հավաստող համապատասխան փաստաթղթերը, և իրենք և իրենց ընտանիքի անդամներն ընդգրկված չեն գյուղատնտեսության ոլորտում վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորմամբ իրականացվող պետական աջակցության ծրագրերում,

գ. ծրագրի շրջանակներում առաջնահերթությունը տրվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ներկայացված մշակաբույսերի մշակման ծրագրերի իրականացմանը,

դ. հողօգտագործողին տրվում է ծրագրում ընդգրկվելու առաջնահերթություն, եթե նրա՝

ընտանիքը հաշվառված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում և անապահովության միավորը բարձր է 0-ից,

ընտանիքում առկա է երկու և ավելի անչափահաս,

ընտանիքի անդամներից մեկը հաշմանդամություն ունեցող անձ է,

ընտանիքը Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողի ընտանիք է,

նա բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության (մանկատան) շրջանավարտ է,

նա սոցիալական դեպքի վարման շրջանակներում սոցիալական աջակցության տարածքային գործակալության (բաժնի) կողմից ներկայացված անձ է:

ե. ծրագրի շրջանակներում ծրագրում ընդգրկված հողօգտագործողին մեկ մարդ/օր աշխատանքային ծավալի համար նախատեսվում է ֆինանսական օժանդակություն՝ չորս հազար դրամի չափով, նախատեսված աշխատանքներում գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման դեպքում հողօգտագործողին տրվում է ֆինանսական օժանդակություն՝ մեկ ժամվա համար հինգ հազար դրամի չափով: Ընդ որում՝ մեկ ծրագրի արժեքը չի կարող ցածր լինել հիսուն հազար դրամից, և գերազանցել երեք հարյուր հիսուն հազար դրամը:

10) Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում

ա. ծրագրի նպատակն աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող մայրերի աշխատանքային ունակությունների ու կարողությունների՝ աշխատանքի վայրում ձեռքբերման հնարավորությունների ընձեռման միջոցով կայուն զբաղվածության ապահովումն է,

բ. ծրագրի շահառուներն աշխատաշուկայում անմրցունակ անձինք են,

գ. ծրագրի տևողությունը չի կարող գերազանցել վեց ամիսը,

դ. ծրագրում ընդգրկված անձանց՝ ուսուցման ամբողջ ժամանակահատվածի ընթացքում տրվում է կրթաթոշակ՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափով՝ մասնագիտական ուսուցմանը մասնակցելու համար պահանջվող տրանսպորտային և այլ ծախսերը հոգալու, ինչպես նաև երեխաների խնամքը կազմակերպելու համար, գործատուի մոտ մասնագիտական ուսուցումը կազմակերպող՝ ուսուցանող մասնագետին՝ նրա նախորդ տարվա միջին ամսական աշխատավարձի 20 տոկոսի չափով հավելում, բայց ոչ ավելի, քան «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափը, իսկ այն դեպքում, երբ մասնագիտական ուսուցում կազմակերպող մասնագետն անհատ ձեռնարկատեր է, ապա նրան ամսական կտրվածքով վճարվում է գումար՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսի չափով, ինչպես նաև գործատուին մասնագիտական ուսուցումը կազմակերպելու համար պահանջվող նյութական ծախսերը (հումք և աշխատանքի առարկա հանդիսացող այլ նյութեր) հոգալու նպատակով վճարվում է միանվագ գումար՝ 30.0 հազար դրամի չափով:

11) Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող՝ աշխատանք փնտրող անձանց՝ մինչև երեխայի երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում, երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրում

ա. ծրագրի նպատակը մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց աշխատանքի վերադառնալու հնարավորությունների մեծացումն է՝ երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելուն ուղղված աջակցության տրամադրման միջոցով,

բ. ծրագրի շահառուներն են տարածքային կենտրոններում հաշվառված, մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատանք փնտրող անձինք, որոնք մինչև երեխայի երկու տարին լրանալը վերադառնում են աշխատանքի,

գ. ծրագրի իրականացման ընթացքում յուրաքանչյուր տարի՝ ոչ ավելի, քան 11 ամիս ամսական կտրվածքով շահառուին՝ մինչև երկու տարեկան յուրաքանչյուր երեխայի խնամքի համար վճարվում է գումար՝ ծառայությունների մատուցման կամ աշխատանքային պայմանագրով սահմանված ամսական վարձատրության 50 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափը:

12) Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովում

ա. վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման նպատակը գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման միջոցով հանրապետությունում սոցիալական լարվածության մեղմումն է, իրավիճակից բխող մարտահրավերներին արագ արձագանքող միջոցներով համայնքներին աջակցելն է,

բ. ծրագրի շահառուները գործազուրկի կարգավիճակ ստացած անձինք են,

գ. ծրագրի առավելագույն տևողությունը երեք ամիս է,

դ. ծրագրի արժեքը չի կարող գերազանցել 1,500.0 հազար դրամը (որի մեջ ներառված չէ համայնքային բյուջեների միջոցների հաշվին կատարվող ֆինանսավորումը), որը տրամադրվում է աշխատավարձերի վճարման, ինչպես նաև շինանյութեր, բարեկարգման համար անհրաժեշտ այլ պարագաներ ձեռք բերելու, տեղափոխելու, աղբահանության ծախսերը փոխհատուցելու նպատակով: Ապրանքներ ձեռք բերելու, տեղափոխելու, աղբահանության ծախսերը փոխհատուցելու նպատակով տրամադրվող գումարը չի կարող գերազանցել յուրաքանչյուր ծրագրի արժեքի 20 տոկոսը.

ե. ծրագրում ընդգրկված գործազուրկին՝ օժանդակ աշխատանքներ կատարելու համար մեկ աշխատանքային օրվա համար վճարվում է հինգ հազար դրամ՝ ներառյալ եկամտային հարկը, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում՝ նպատակային սոցիալական վճարը:

33. Զբաղվածության պետական գործակալությունը զբաղվածության պետական կարգավորման շրջանակներում տրամադրում է նաև հետևյալ հիմնական ծառայությունները՝

1) աշխատանք փնտրող անձին անհրաժեշտ տեղեկատվության ու խորհրդատվության տրամադրում և հաշվառում, կայուն զբաղվածության ապահովման նպատակով կարիքների գնահատում և անհատական ծրագրի կազմում,

2) գործատուներին անհրաժեշտ խորհրդատվության և տեղեկատվության տրամադրում,

3) գործատուներից թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվության ստացում և հավաքագրում,

4) աշխատանք փնտրող անձանց մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ խորհրդատվության տրամադրում,

5) աշխատանք փնտրող անձանց աշխատանքի տեղավորման միջնորդություն,

6) աշխատանք փնտրող անձանց, թափուր աշխատատեղերի, գործակալության հետ համագործակցող գործատուների վերաբերյալ տեղեկատվական շտեմարանի վարում,

7) աշխատանքի տեղավորման ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություններին անհրաժեշտ տեղեկատվության և մասնագիտական խորհրդատվության, ինչպես նաև մեթոդական աջակցության տրամադրում,

8) ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, հատկապես՝ նպաստառու ընտանիքների գործունակ և աշխատանքային տարիքի հասած,

գործազուրկ անդամների հետևողական ներգրավումը կայուն կամ ժամանակավոր զբաղվածություն ապահովող ծրագրերում,

9) զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի և ծառայությունների հանրային իրազեկում:

34. Միաժամանակ, հաշվի առնելով աշխատաշուկայի մասով «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից կատարված վերլուծությունների արդյունքները, զբաղվածության պետական ծրագրերի մասով իրականացված մոնիթորինգի և գնահատման արդյունքները, առաջիկայում կիրականացվեն համապատասխան ծրագրային փոփոխություններ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում կմշակվեն զբաղվածության կարգավորման նոր ծրագրային առաջարկություններ:

35. Հաշվի առնելով զբաղվածության և համախառն ներքին արդյունքի ցուցանիշների ընդհանուր դինամիկայի կանխատեսումները Հայաստանի Հանրապետությունում՝ սահմանվել են ամենամյա ծրագրի արդյունքային ցուցանիշների թիրախային արժեքները, մասնավորապես՝

1) զբաղվածության ծրագրերում ընդգրկված և արդյունքում աշխատանքի տեղավորվածների տեսակարար կշռի աճ առնվազն 5%-ով,

2) զբաղվածության ծրագրերում ընդգրկվածների տեսակարար կշռի աճ ծրագրերում ընդգրկվելու համար հաշվառվածների մեջ առնվազն 5%-ով,

3) ԶՊԳ-ի կողմից մատուցված ծառայությունների նկատմամբ աշխատանք փնտրողի առնվազն 60% գոհունակության աստիճան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2020 թվականի
սեպտեմբերի 29-ի N 1599- Լ որոշման

Ց Ա Ն Կ
ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքները	Ֆինանսավորման աղբյուրը
1.	Աշխատանք փնտրող անձանց խորհրդատվության տրամադրում	Տարվա ընթացքում շուրջ 50000 աշխատանք փնտրող անձանց խորհրդատվության տրամադրում	ֆինանսավորում չի պահանջում
2.	Աշխատանք փնտրող անձանց աշխատանքի տեղավորման միջնորդություն (առանց զբաղվածության կարգավորման պետական ծրագրերում ընդգրկելու)	Շուրջ 7600 աշխատանք փնտրող անձանց աշխատանքի տեղավորման միջնորդություն	ֆինանսավորում չի պահանջում
3.	Գործատուների հետ համագործակցություն	Տարեկան կտրվածքով շուրջ 8600 չկրկնվող թափուր աշխատատեղերի վերաբերյալ գործատուներից ստացված կամ հավաքագրված տեղեկատվության ապահովում	ֆինանսավորում չի պահանջում
4.	Զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի հանրային իրազեկում	Յուրաքանչյուր ամիս և անհրաժեշտությունից ելնելով՝ համակարգում իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում շահագրգիռ անձանց և հասարակության ներկայացուցիչներին	ֆինանսավորում չի պահանջում
5.	Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին մինչև վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց	700 ունկնդրի մասնագիտական ուսուցում անցնելու վերաբերյալ փաստաթղթերի տրամադրում	ՀՀ պետական բյուջե՝ 63,875.0 հազար դրամ

	մասնագիտական ուսուցման կազմակերպում		
6.	Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին մինչև վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց կրթաթոշակի տրամադրում	700 գործազուրկների մասնագիտական ուսուցման ընթացքում կրթաթոշակի վճարում	ՀՀ պետական բյուջե՝ 71,400.0 հազար դրամ
7.	Աշխատաշուկայում անմրցունակ ազատազրկման վայրերից վերադարձած, հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև «հաշմանդամություն ունեցող երեխա» կարգավիճակ ունեցող անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրում	Կազմակերպել աշխատաշուկայում անմրցունակ հաշմանդամություն ունեցող 50 անձանց աշխատանքի ընդունելու դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցումը, որոնցից 5-ին՝ ուղեկցողի համար նաև դրամական օգնության տրամադրումը	ՀՀ պետական բյուջե՝ 42,840.0 հազար դրամ
8.	Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում	Մասնագիտություն ունեցող, սակայն մասնագիտական աշխատանքային փորձ չունեցող 409 գործազուրկների աշխատանքային պրակտիկայի կազմակերպում գործատուի մոտ	ՀՀ պետական բյուջե՝ 164,340.1 հազար դրամ
9.	Աշխատանքի տոնավաճառի կազմակերպում	10 աշխատանքի տոնավաճառի կազմակերպում	ՀՀ պետական բյուջե՝ 7,000.0 հազար դրամ
10.	Հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների համար դասընթացների կազմակերպում	Հաշմանդամություն ունեցող երեխաների 28 ծնողների համար մասնագիտական ուսուցման կազմակերպում	ՀՀ պետական բյուջե՝ 2,564.1 հազար դրամ

11.	Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորմանն աջակցության տրամադրում	Այլ վայր աշխատանքի գործուղված 22 գործազուրկների աջակցության տրամադրում	ՀՀ պետական բյուջե՝ 23,320.0 հազար դրամ
12.	Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում	1) Գործատուի մոտ գործուղել աշխատաշուկայում անմրցունակ շուրջ 975 անձանց՝ հմտություններն ու ունակությունները զարգացնելու համար 2) Հաշմանդամություն ունեցող 25 անձանց աշխատատեղը հարմարեցնելու միջոցով աշխատանքի տեղավորում	1) ՀՀ պետական բյուջե՝ 195,000.0 հազար դրամ 2) ՀՀ պետական բյուջե՝ 12,500.0 հազար դրամ
13.	Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար աջակցության տրամադրում	Կազմակերպել աշխատաշուկայում անմրցունակ 50 անձանց ձեռնարկատիրական գործունեության համար անհրաժեշտ ֆինանսական աջակցություն	ՀՀ պետական բյուջե՝ 50,000.0 հազար դրամ
14.	Աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ (տավարաբուծությամբ, ոչխարաբուծությամբ, խոզաբուծությամբ, այծաբուծությամբ, թռչնաբուծությամբ) զբաղվելու համար տրամադրվող աջակցություն	Կազմակերպել աշխատաշուկայում անմրցունակ 500 անձանց անասնապահությամբ (տավարաբուծությամբ, ոչխարաբուծությամբ, խոզաբուծությամբ, այծաբուծությամբ, թռչնաբուծությամբ) զբաղվելու համար տրամադրվող աջակցություն	ՀՀ պետական բյուջե՝ 575,600.0 հազար դրամ
15.	Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար աջակցության տրամադրում ծրագրի իրականացման համար	Ծրագրի շրջանակներում աշխատաշուկայում անմրցունակ անձանց ձեռնարկատիրական գործունեության մեկնարկի և իրականացման համար անհրաժեշտ աջակցություն պատվիրակում «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ընտրված կազմակերպությանը	ՀՀ պետական բյուջե՝ 10,000.0 հազար դրամ

	խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում		
16.	Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում	Աշխատաշուկայում անմրցունակ անձանց համար կազմակերպել 764 ծրագիր	ՀՀ պետական բյուջե՝ 192,842.2 հազար դրամ
17.	Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում	173 շահառուի՝ գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպման աջակցության տրամադրում	ՀՀ պետական բյուջե՝ 113,454.0 հազար դրամ
18.	Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող՝ աշխատանք փնտրող անձանց՝ երեխայի մինչև երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում, երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրում	600 շահառուի՝ երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրում	ՀՀ պետական բյուջե՝ 448,800.0 հազար դրամ
19.	Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովում	Գործազուրկների համար կազմակերպել 84 ծրագիր՝ ընդգրկելով 840 շահառուներ	ՀՀ պետական բյուջե՝ 126,000.0 հազար դրամ
20.	Վարձատրվող հասարակական աշխատանքների իրականացման ապահովում	Գործազուրկների համար կազմակերպել 84 ծրագիր՝ ընդգրկելով 840 շահառուներ	ՀՀ պետական բյուջե՝ 1,260.0 հազար դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2020 թվականի
սեպտեմբերի 29-ի N 1599 - Լ որոշման

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՆ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
(ֆինանսական միջոցներ՝ հազ. դրամ, կայուն զբաղվածության գործակից՝ %)

Մարզ	ԱՐԱԳԱԾՈՏՆ	ԱՐԱՐԱՏ	ԱՐՄԱՎԻՐ	ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	ԼՈՌԻ	ԿՈՏԱՅՔ	ՇԻՐԱԿ	ՍՅՈՒՆԻՔ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՏԱՎՈՒՇ	ԵՐԵՎԱՆ	ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին մինչև վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում												
Ծրագրում ընդգրկված շահառուների թիվը, այդ թվում՝	33	46	47	37	74	66	105	28	14	41	209	**700**
հաշմանդամություն ունեցող անձանց թիվը	3	5	5	4	7	7	11	2	1	4	21	**70**
Տրամադրվող կրթաթոշակ	**3366.0**	**4692.0**	**4794.0**	**3774.0**	**7548.0**	**6732.0**	**10710.0**	**2856.0**	**1428.0**	**4182.0**	**21318.0**	**71400.0**
Ուսուցման կազմակերպում	**3011.3**	**4197.5**	**4288.8**	**3376.3**	**6752.5**	**6022.5**	**9581.3**	**2555.0**	**1277.5**	**3741.3**	**19071.3**	**63875.0**
Աշխատանքի տեղավորվածների թիվը	**16.0**	**23.0**	**23.0**	**19.0**	**37.0**	**33.0**	**52.0**	**14.0**	**7.0**	**21.0**	**105.0**	**350.0**
Կայուն զբաղվածության գործակիցը	30.0	30.0	30.0	30.0	29.0	30.0	36.0	30.0	30.0	30.0	38.0	**33.2**
Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության աշխատաշուկայում անմրցունակ ազատազրկման վայրերից վերադարձած, հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև «հաշմանդամություն ունեցող երեխա» կարգավիճակ ունեցող անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրում												

Ծրագրում ընդգրկված շահառուների թիվը	4	3	4	4	4	4	6	2	3	4	12	**50**
Հաշմանդամություն ունեցող անձանց ուղեկցողների թիվը	1	1	0	0	1	0	1	0	1	0	0	**5**
Նախատեսվող ֆինանսական միջոցները	**3672.0**	**2856.0**	**3264.0**	**3264.0**	**3672.0**	**3264.0**	**5304.0**	**1632.0**	**2856.0**	**3264.0**	**9792.0**	**42840.0**
Կայուն զբաղվածության գործակիցը	90.0	90.0	90.0	90.0	90.0	90.0	90.0	90.0	90.0	90.0	90.0	**90.0**
Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում՝												
Ծրագրում ընդգրկված շահառուների թիվը, այդ թվում՝	18	28	30	26	42	48	62	23	19	28	85	**409**
հաշմանդամություն ունեցող անձանց թիվը	1	3	3	3	4	5	6	2	2	3	9	**41**
Նախատեսվող ֆինանսական միջոցները	**7232.6**	**11250.7**	**12054.3**	**10447.0**	**16876.0**	**19286.9**	**24912.2**	**9241.6**	**7634.4**	**11250.7**	**34153.8**	**164340.1**
Աշխատանքի տեղավորվածների թիվը	**9.0**	**14.0**	**15.0**	**13.0**	**21.0**	**24.0**	**31.0**	**12.0**	**10.0**	**14.0**	**42.0**	**205.0**
Կայուն զբաղվածության գործակիցը	35.0	35.0	37.0	35.0	39.0	39.0	39.0	38.0	35.0	39.0	50.0	**40.2**
Աշխատանքի տոնավաճառի կազմակերպում՝												
Ծրագրում ընդգրկված գործատուների թիվը	30	30	30	30	40	40	40	40	30	30	60	**400**
Թափուր աշխատատեղերի թիվը	180	200	200	250	350	300	350	350	150	150	450	**2930**
Տոնավաճառների թիվը	1	1	1	1	1	1	1	1	0	1	1	**10**
Նախատեսվող ֆինանսական միջոցները	**700.0**	**700.0**	**700.0**	**700.0**	**700.0**	**700.0**	**700.0**	**700.0**	**0.0**	**700.0**	**700.0**	**7000.0**
Հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների համար դասընթացների կազմակերպում՝												
Ծրագրում ընդգրկված շահառուների թիվը											28	**28**
Նախատեսվող ֆինանսական միջոցները											2564.1	**2564.1**
Աշխատանքի տեղավորվածների թիվը												**14**

Կայուն զբաղվածության գործակիցը												**33.2**
Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում												
Ծրագրում ընդգրկված շահառուների թիվը, այդ թվում՝	1	1	1	1	3	3	2	2	1	1	6	**22**
Նախատեսվող ֆինանսական միջոցները	1060	1060	1060	1060	3180	3180	2120	2120	1060	1060	6360	**23320.0**
Կայուն զբաղվածության գործակիցը	90.0	90.0	90.0	90.0	90.0	90.0	90.0	85.0	0.0	82.0	95.0	**86.5**
Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում												
Ընդամենը ծրագրում ընդգրկված շահառուների թիվը	62	51	73	81	106	92	142	53	42	74	224	**1000**
Նախատեսվող ֆինանսական միջոցները	**12700.0**	**10500.0**	**14900.0**	**16500.0**	**21800.0**	**19000.0**	**30200.0**	**10900.0**	**8700.0**	**15100.0**	**47200.0**	**207500.0**
Կայուն զբաղվածության գործակիցը	85.0	90.0	90.0	90.0	90.0	90.0	90.0	90.0	85.0	85.0	95.0	**90.2**
ա) աշխատաշուկայում անմրցունակ հաշմանդամություն ունեցող անձանց աշխատատեղի հարմարեցման համար միանվագ փոխհատուցում գործատուին												
Ծրագրում ընդգրկված շահառուների թիվը	1	1	1	1	2	2	6	1	1	1	8	**25**
Նախատեսվող ֆինանսական միջոցները	**500.0**	**500.0**	**500.0**	**500.0**	**1000.0**	**1000.0**	**3000.0**	**500.0**	**500.0**	**500.0**	**4000.0**	**12500.0**
բ) աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման համար միանվագ փոխհատուցում գործատուին												
Ծրագրում ընդգրկված շահառուների թիվը	61	50	72	80	104	90	136	52	41	73	216	**975**
Նախատեսվող ֆինանսական միջոցները	**12200.0**	**10000.0**	**14400.0**	**16000.0**	**20800.0**	**18000.0**	**27200.0**	**10400.0**	**8200.0**	**14600.0**	**43200.0**	**195000.0**
Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում												
Ծրագրում ընդգրկված շահառուների թիվը, այդ թվում՝	3	5	5	3	5	5	7	2	3	5	7	**50**

հաշմանդամություն ունեցող անձանց թիվը	1	1	1	1	1	1	2	1	1	1	2	**13**
Նախատեսվող ֆինանսական միջոցները	**3000.0**	**5000.0**	**5000.0**	**3000.0**	**5000.0**	**5000.0**	**7000.0**	**2000.0**	**3000.0**	**5000.0**	**7000.0**	**50000.0**
Կայուն զբաղվածության գործակիցը	90.0	90.0	90.0	90.0	90.0	90.0	90.0	90.0	90.0	90.0	90.0	**90.0**
Ծրագրի իրականացման համար խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման ծախսեր											**10000.0**	**10000.0**
Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում												
Ծրագրերի թիվը	82	63	88	71	86	78	115	65	21	95		**764**
Ծրագրում ընդգրկված անձանց թիվը	99	76	106	85	103	94	138	78	25	114		**918**
Նախատեսվող ֆինանսական միջոցները	**20697.7**	**15901.9**	**22212.2**	**17921.2**	**21707.3**	**19688.1**	**29027.3**	**16406.7**	**5300.6**	**23979.0**		**192842.2**
Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում												
Ծրագրում ընդգրկված շահառուների թիվը	9	14	13	11	21	16	25	6	7	13	38	**173**
Նախատեսվող ֆինանսական միջոցները	**5902.2**	**9181.2**	**8525.4**	**7213.8**	**13771.9**	**10492.9**	**16395.1**	**3934.8**	**4590.6**	**8525.4**	**24920.5**	**113454.0**
Աշխատանքի տեղավորվածների թիվը	**4.0**	**7.0**	**6.0**	**6.0**	**10.0**	**8.0**	**13.0**	**3.0**	**4.0**	**7.0**	**19.0**	**87.0**
Կայուն զբաղվածության ցուցանիշ	40.0	40.0	40.0	40.0	40.0	40.0	40.0	40.0	40.0	40.0	40.0	**40.0**
Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող՝ աշխատանք փնտրող անձանց՝ մինչև երեխայի երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում, երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրում												
Ծրագրում ընդգրկված շահառուների թիվը	47	41	54	44	68	50	88	40	15	43	110	**600**
Նախատեսվող ֆինանսական միջոցները	**35156.0**	**30668.0**	**40392.0**	**32912.0**	**50864.0**	**37400.0**	**65824.0**	**29920.0**	**11220.0**	**32164.0**	**82280.0**	**448800.0**
Կայուն զբաղվածության ցուցանիշ	90.0	90.0	90.0	90.0	90.0	90.0	90.0	90.0	90.0	90.0	90.0	**90.0**
Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովում												
Ծրագրերի թիվը	2	2	8	8	19	5	15	5	3	17		**84**

Ծրագրում ընդգրկված անձանց թիվը	20	20	80	80	190	50	150	50	30	170		**840**
Նախատեսվող ֆինանսական միջոցները	**3000.0**	**3000.0**	**12000.0**	**12000.0**	**28500.0**	**7500.0**	**22500.0**	**7500.0**	**4500.0**	**25500.0**		**126000.0**
Պահպանման ծախսեր	**30.0**	**30.0**	**120.0**	**120.0**	**285.0**	**75.0**	**225.0**	**75.0**	**45.0**	**255.0**		**1260.0**
Աշխատաշուկայում անմրցունակ անձանց անսանապահությամբ (տրավարաբուծությամբ, ոչխարաբուծությամբ, խոզաբուծությամբ, այծաբուծությամբ, թռչնաբուծությամբ) զբաղվելու համար աջակցության տրամադրում												
Ծրագրերի թիվը	63	25	64	70	36	32	51	25	66	68		**500.0**
Նախատեսվող ֆինանսական միջոցները	**72525.6**	**28780.0**	**73676.8**	**80584.0**	**41443.2**	**36838.4**	**58711.2**	**28780.0**	**75979.2**	**78281.6**		**575600.0**
Կայուն զբաղվածության գործակիցը	90.0	90.0	90.0	90.0	90.0	90.0	90.0	90.0	90.0	90.0		**90.0**
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը												
Բոլոր ծրագրերում ընդգրկված շահառուների ընդհանուր թիվը, այդ թվում՝	**358**	**309**	**476**	**441**	**649**	**457**	**774**	**307**	**224**	**560**	**713**	**5290**
հաշմանդամություն ունեցող անձանց թիվը	10	13	14	13	18	19	31	8	8	13	52	199
Կայուն զբաղվածության միջինացված գործակիցը												**70.1**
Ծրագրերի իրականացման արդյունքում կայուն զբաղվածության ապահովում												**2476**
Ընդամենը ֆինանսական միջոցներ	**172,053.4**	**127,817.3**	**202,987.4**	**192,872.3**	**222,099.9**	**175,179.7**	**283,210.0**	**118,621.2**	**127,591.3**	**213,003.0**	**265,359.7**	**2,100,795.4**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

voroshumTK320.3